ՆՈՐ-ԴԱՐ

№ 155 ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, Երեքշաբթի, 7 Սեպտեմբերի 1893 Երեքշաբթի, 7 Սեպտեմբերի ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, № 155

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 րուբլի 50 կոպ.
Թիֆլիսում՝ ամիսը՝ 1 րուբլի, հատով 5 կոպէկ։
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis. Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչեւ 2-ը
Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բառին 2 կոպ., բնկերամների համար կրկնապատիկ։

Տպարան եւ Վիմագրատուն

Ա. Յ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑԻ

ՏՊԱՐԱՆՈՒՄ

ՆԻ ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ

(Նաքերեժնայա փողոց, տուն պ. Ն. Գրիգորեանի Հայոց եկեղ. ծխ. ուս.)։

Ստանալով նոր տպատառեր եւ շատ տեսակ պատրաստուած վերջին ճաշակով ընդունւում են ամենայն տեսակ տպագրութեան վերաբերեալ գործերը ամենայն լեզուներով. հանձնաժողով ունի գծած քարտէսներ եւ գիտական (ֆոտոգրաֆիայի) պատուէրներ յանձն առնելով Քէ պատուէրների ճիշդ կատարման եւ Քէ մաքրութեան բոլոր պարտականութիւնը։ Օտարաքաղաքացիների պատուէրներն կատարւում են ամենայն շտապութեամբ։ (468) 6—5.

Ա. Յ. Մելիք-Շահնազարեանցի։

Գրիգորեանի Հայոց եկեղ. ծխ. ուս.
Նաքերեժնայա փողոց, տուն պ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կովկասի պ. Կառավարչապետի և Վեհ. Կաթողիկոսի խօսած ճառերը.

Փրոնիկոն. — Սուքիաս և Ներսէս սրբազանների գալուստը. Սուքիաս և Ներսէս սրբազանների ներկայանալը՝ Վեհ. Կաթողիկոսին. Վեհ. Կաթողիկոսի մեկնումը. Մամբրէ եպիսկոպոսի հոգեհանգիստը. Թերթիս խմբագրի ուղեկցութիւնը Վեհափառին. Թերթիս Թղթակցի և ներկայացուցչի ուղեկցութիւնը Վեհափառին. Վեհ. Կաթողիկոսի նուէրը բանտարկեալներին. Նորին Վեհափառութեան այցելութիւնը Ներսիսեան և միւս դպրոցներն ու կուսանաց վանքը. Նուէր Վեհ. Կաթողիկոսին. Ներսիսեան դպրանոցի ուսուցչական խմբի ներկայանալը Վեհափառ Վեհափառ Կաթողիկոսին Կաթողիկոսի այցելութիւնները. Դերասանների ներկայանալը Վեհափառ Կաթողիկոսին. Աչքդ Զիւանին Վեհափառի մօտ. Կովկասի գիւղատնտեսական բնկ. անդամների և Բալախանի բանուորների պատգամաւորութեան ներկայանալը Նորին Վեհափառութեան. Երկաթուղի Սամարղանդից Տաշքենդ և Կոկանդ. Ելեւէնդրօվից. Խ. Աբովեանի յիշատակին նուիրուած գումարների քանակը.

Պաշտօնական տեղեկութիւններ խոլերայի մասին.

Թաչտաուր Աբովեան.

Ձայն Վեհարանեայ.

Ննկուրիի դատապարտեալը.

Թղթակցութիւններ. — Ուսուցչական. — Բազմազան. — Բազմազան լուրեր.

Թատրն լուրեր.

Հեռագրներ.

Բանաստեղծական. — Նամակ Ամերիկայից.

Տեղեկատու.

Յայտարարութիւններ.

ԿՈՎԿԱՍԻ Պ. ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏԻ ԵՒ ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՕՍԱԾ ՃԱՌԵՐԸ։

—

Մեր խոստման համաձայն, առաջ ենք բերում սեպտեմբերի 3-ին Կովկասի պ. Կառավարչապետի մօտ եղած ընդունելութեան ժամանակ պ. Կառավարչապետի և Վեհ. Կաթողիկոսի խօսած ճառերը։

Պ. Կառավարչապետը, պատասխանելով նորին Վեհափառութեանը, հետեւեալն ասաց.

«Պատիւ ունիմ ողջունելու Ձեր Վեհափառութեանը և ցաւ յայտնելու, որ միջոց չունեցայ Ձեր գալուս առաջին օրն և եթէ ողջունելու Ձեզ։ Ես ինձ բախտաւոր եմ համարում, որ այսօր կարող եմ կատարել Նորին Կայսերական Մեծութեան ինձ վրայ դրած քաղց պարտականութիւնը՝ յանձնելու Ձեզ Բարձրագոյն Հրովարտակը»։

Բարձրագոյն Հրովարտակն և Անչքանդը Նուացու չքանշանն ու վեղարի ադամանդեայ խաչը յանձնելու Հանդիսից յետոյ, Ծայր. վարդ. Խորէն Ստեփանէի միջոցով պ. Կառավարչապետը հետեւեալն ասաց.

«Խնդրեմ յայտնէք Նորին Սրբութեանն իմ անկեղծ շնորհաւորութիւնը Կայսերական բարձր շնորհի համար, այլ և իմ սրտագին բարեմաղթութիւնը, որ երկարատև ու բեղմնաւոր լինի Նորին Սրբութեան գործունէութիւնն Իւր վեմ աստղարիզի վրայ յօգուտ Իւր Հօտի և երկրի»։

Այդ ճառին Նորին Վեհափառութիւնը հայր Խորէնի հմտալից թարգմանութեամբ հետեւեալը պատասխանեց.

«Ի սրտէ շնորհապարտ ենք Նորին Մեծութեան Թագաւոր Կայսեր Եւ ալ, իմ հօտս ալ։ Եւ մեր շնորհապարտութիւն անսահման է։ Պատմական հանդէս է այս, որով Հայոց Հովիւ կը հաստատեն։ Դեռ Սիօնից նոր իջած՝ այսքան պատիւներ կընորհուին։ Այս պատիւներ չեն վերաբերիր ինձ, որ սոսկ վանական մըն եմ. չեն վերաբերիր իմ անձնական արժանիքներուս, այլ —Աքարատեան Մայր Աթոռին և իմ հօտիս անսահման հաւատարմութեան, որ ամեն ժամանակ և յատիեան պատրաստ է զոհել իւր անձն և ինչք ի ծառայութիւն և ի փառս Կայսեր մեծազօր Ռուսիոյ։ Իսկ ես յընթացս բովանդակ կենաց սովոր եմ միշտ «տալ զԿայսերն Կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ», և առաջիկայումս ևս չպիտի վրիպեմ այդ կանոնէն։ Ննորհակալ եմ Ամենաբարձրեալէն, որ իմ հօտիս մի մասը դրել է Մեծին Ռուսիոյ Կայսեր հովանոյն տակ, ուր Հայոց ազգը պահել և պահպանել է սըբբութեամբ իւր հին ազգային եկեղեցւոյ աւանդութիւնները, իւր կրօն և աստուածպաշտութիւն, այլ և յարատև կըզարգանայ բարոյապէս և մտաւորապէս։ Այս Հանդէս և Հայաստանեայց Եկեղեցւոյ Հանդէս է, պատմական ժամանակներից մեզ Հասած, որ սրբութեամբ պահել պահպանել են Մեծին Ռուսիոյ բարեպաշտ վեհապետները։ Ուստի իմ սիրելի Հօտիս հետ ջերմ մաղթանքներ կըվերառաքեմ առ Ամենաբարձրեալն, որ Նա երկար և բարեբաստիկ օրեր շնորհէ Կայսեր, Կայսրուհուն, Թագաժառանգին և բոլոր Օգոստափառ տան։ Իսկ ձեզ, իբրև Կայսերական շնորհայիթարգմանի, Իմ և Իմ Հօտիս կողմէ խորհին շնորհակալիքները կըլայտնեմ։ Թող Աստուծոյ օրհնութիւնը լինի Ռուսիոյ և նրա ժողովրդոց, այլ և ձեզ և ձերդ բարձր գերազանցութեան ընտանեաց վրայ»։

Ա. Զ Դ

Սեպտեմբերի 1-ից «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում եւ վճարում են՝ 4 ր. 50 կ.։

Ով որ բաժանորդ է գրուել սեպտեմբերից եւ փողը պակաս է ուղարկել, Թող պակասն ուղարկեն.

ՔՐՈՆԻԿՈՆ

Ուրբաթ, սեպտ. 3-ին, երեկոյեան 8 ժամին, ռազմա-վիրական ճանապարհով Թիֆլիս ժամանեցին՝ Սուքիաս և Ներսէս սրբազանները և Վեհափառ Հայրապետի հրամանով իջան առաջնորդարանում։

—

Սեպտ. 4-ին, չաբաթ առաւօտը ժամը մօտ 9-ին Վեհափառ Կաթողիկոսն ընդունեց Սուքիաս և Ներսէս սրբազաններին։

Սուքիաս սրբազանը վեղարը գլխից առնելով մի քանի խօսքով ողջունեց Վեհափառ Կաթողիկոսին և այնուհետև սրբազանները համբուրեցին Վեհափառի ս. աջը։

Վեհ. Կաթողիկոսը նրանց հրամայեց նստել, բարի գալուստ մաղթեց, հայրաբար մխիթարեց և օրհնելով արձակեց նրանց։

—

Երեքշաբթի (այսօր), սեպտեմբերի 7-ին, առաւօտեան ժամը 8-ին արտակարգ և առանձին գնացքով Աղստաֆա պիտի մեկնի Նորին Վեհափառութիւնը։ Վեհ. Կաթողիկոսի յատուկ հրամանով ուղեկցում են Նրան նաև Սուքիաս և Ներսէս սրբազանները։

—

Կիրակի, սեպտեմբերի 5-ին, վանքի առագ եկեղեցում մատուցուած պատարագից յետոյ, խաւուն բազմութեան ներկայութեամբ սրբազան Սուքիաս Սարգիս և Ներսէս եպիսկոպոսները հանդիսաւոր հոգեհանգիստ կատարեցին Թիֆլիսի թեմի հանգուցեալ առաջնորդ Մամբրէ եպիսկոպոս Սանասարեանի գերեզմանի վրայ, որ գտնւում է վանքի առագ եկեղեցու բակում։

—

Վեհափառն ուղեկցում է մինչև Աղստաֆա կայարանը Թերթիս խմբագիրը։

—

Նոր-Դար-ի կողմից իբրև թղթակից և ներկայացուցիչ ուղեկցում է Նորին Վեհափառութեանը մինչև Իջմիածին մեր աշխատակից Մուրացանը։

—

Վեհ. Կաթողիկոսը 200 րուբլի նուիրեց Թիֆլիսի բանտարկեալներին։

—

Երկուշաբթի, սեպտ. 6-ին, առաւօտեան ժամը 1-ին Նորին Վեհափառութիւնն այցելեց Ներսիսեան դպրանոցը։ Հենց որ Վեհափառ Հայրապետը մտաւ ուսումնարանի բակը, երգեցիկ Նորահրաշ չարականը և Տէր պահեա զկայսրն հնչեց. այնուհետև մի աչակերտ երգեց Նորին Վեհափառութեանը նուիրուած երգը։ Դպրանոցի տեսուչ պ. Կոստանեանցը մի ճառով դիմաւորեց Վեհափառ Հայրապետին և ի միջի այլոց ասաց, որ՝ 70 տարի է գոյութիւն ունի դպրոցը և այդ ժամանակամիջոցում նա չի չեղուել իւր հիմնադրի գրծած ուղղութիւնից. այսու հետև էլ յոյս ունի, որ Նորին Վեհափառութեան հովանաւորութեան տակ աւելի ևս կբարգաւաճի։

Գ. Տեսուչը դպրանոցի ուսումնական տեղեկագիրը մատոյց Նորին Վեհափառութեանը, իսկ հոգաբարձուներից մէկը՝ մատոյց տնտեսական մասի տեղեկագիրը։

Նորին Վեհափառութիւնը օրհնեց հիմնադրի յիշատակը և ասաց մօտաւորապէս հետեւեալը.

«30 տարի առաջ, այս քաղաքը եղած ժամանակ, կրնկատէի, որ ամեն տեղ կ'օրհնէին դպրանոցիս հիմնադրի յիշատակը. մինչդեռ ես մի մանաւոր ճաշակերոյթի ժամանակ մոռցայ անոր յիշատակն օրհնել. իսկ այսօր ես կ'օրհնեմ երջանկայիշատակ Ներսէս Ե-ի յիշատակը և կրխոստանամ չարունակ օրհնել։

Այնուհետև օրհնելով և խրախուսելով բոլոր ուսուցիչներին, հոգաբարձուներին և աչակերտներին՝ մեկնեց դպրանոցից։

—

Վեհափառ Կաթողիկոսը, բացի Ներսիսեան դպրանոցից, Իւր այցելութեամբը պատուեց Յովհաննեան-Մարիամեան, Գայիանեան Կարմիր-Ակեռատեանի դպրոցները կուսանաց և վանքը։

—

Սեպտեմբերի 4-ին Նորին Վեհափառութիւնն այցելութեան գնաց Կովկասի պ. Կառավարչապետի օգնական գլխաւոր Տատիշչեվին, պ. Կառավարչապետի խորհրդի անդամ գ. խ. Պրիբիլին և Թիֆլիսի նահանգապետ իշխան Շերվաշիձէին։ Վերջինս անմիջապէս փոխադարձութեան գնաց Նորին Վեհափառութեանը։ Ն. Ի. Պրիբիլն այցելութեան փոխը դարձրեց հետեւեալ օրը։

—

Սեպտեմբերի 4-ին Նորին Վեհափառութեանը ներկայացան Ներսիսեան դպրանոցի ուսուցչական խումբը դպրոցի տեսուչ պ. Կ. Կոստանեանցի առաջնորդութեամբ։

Ինչպէս ամեն ընդունելութեան ժամանակ, այս անգամ էլ Վեհափառ Հայրապետն իմաստալից կերպով խօսեց ուսուցիչների հետ։

«Այստեղ ամեն առարկայի համար ջոկ ուսուցիչ կայ,—ասաց Վեհափառը.—Պոլիս այդպէս չէ, այնտեղ երեք չորս և աւելի առարկայ մի ուսուցիչ կ'աւանդէ։ Կեդրոնական վարժարան միայն իւրաքանչիւր առարկային համար ջոկ ուսուցիչ ունի։

Ուսուցիչները ժպտալով կըկտմին։ Ուսուցիչ ալ կըմտանակցի բնաւորութիւն կազմելուն. նա պիտի աշխատի բնաւորութեամբ օժտուած ժողովուրդ պատրաստել։ Դուք սերունդ կըդաստիարակէք. նայեցէք, որ լաւ մարդիկ, հայ մարդիկ պատրաստէք։ Հայն ինչ ունի, քան եթէ անչափելին մնայած կրօն և եկեղեցի միայն։

Ներսիսեան մը կայ, կըկարծեն, թէ բնական գիտութիւններ կրպղատրեն մարդը, կըներքին կրօն և եկեղեցի։ Ես այդ նախապաշարումը չունիմ։ Աստուած ամեն տեղ է և ամեն բանի մէջ, բնութեան ամեն երեւոյթներուն մէջ ալ Աստուծոյ զօրութիւնը միայն կրտեսնենք։ Ման երիտասարդ անուանելներ, կարդ մը թեթեւամիտներ, որ Աստուած, կրօն, եկեղեցի չեն ճանչնար և այդպէս կ'ուսուցանեն։

Դուք գարգացեալ մարդիկ էք, աշխատեցէք, որ ամեն գիտութեան մէջ ալ Աստուծոյ զօրութիւնը ցոյց տաք ձեր մատղ աչակերտներուն. աշխատեցէք, որ նրանք ճանչնան և սիրեն իրենց Աստուածը, իրենց եկեղեցին։ Դէպի եկեղեցի տարցուցէք անոնց սիրտը»։

Այնուհետև Նորին Վեհափառութիւնը խօսեց այն մասին, թէ պիտանի քաղաքացի լինելու համար որքան անհրաժեշտ է տէրութեան լեզուն ուսումը, որ ուսուցիչները իրենք լաւ պիտի գիտենան և ուսուցանեն իրենց աչակերտներին։

—

Սեպտեմբերի 4-ին Նորին Վեհափառութեանը ներկայացան Թանդոյեան օրիորդաց ուսումնարանի խնամակալները, և հանդուցեալ խնամակալ Ա. Բարանովսկու որդին պ. Ս. Բարանովսկին, որը Հայրապետին մատոյց մի չքնաղ բարձ Նորին Սրբութեան պատկերը վրան դրօշմած և թանկագին ակներով զարդարած։ Այդ բարձն արժի մի քանի հարիւր րուբլի։ Դա պ. Ս. Բարանովսկու ձեռագործն է։

—

Սեպտեմբերի 4-ին Նորին Վեհափառութեանը ներկայացան հայ դերասանները, որոնց Նորին Սրբութիւնը խորհուրդ տուաւ աչխատածը պահել, որպէս զի ծերութեան օրերում քաղցած չմնան, ինչպէս սովորաբար լինում է դերասանների մէջ, երբ նրանք այլ ևս ընդունակ չեն լինում իրանց գործը գործելու։

—

Նորին Վեհափառութեանը ներկայացաւ աչքդ Զիւանին, որ Հայրապետի թոյլտուութեամբ արտասանեց Հայրիկի պատուին իւր յօրինած մի երգը։

—

Սեպտեմբերի 5-ին Նորին Վեհափառութեանը ներկայացան Կովկասի գիւղատնտեսական ընկերութեան անդամները և Բալախանի բանուորների կողմից ուղարկուած պատգամաւորութիւնը։ Նորին Վեհափառութիւնը չատ սիրով ընդունեց Նրանց և Կովկասի գիւղատնտեսական դրութեան մասին տեղեկութիւններ հարցրեց։ Վեհափառ Կաթողիկոսն ի միջի այլոց յայտնեց ա-

սել։ Ես ինքս ալ կըսիրեմ գիւղատնտեսութիւնը և Թիւրքահայաստանում, Վարպուտ հազած աչքն կըպարապէի անտիսութեամբ։ Այնտեղ նահապետական ձևով կըմշակէին հողը. սակայն այժմ այնտեղ ալ վերջերումս մտցրած են բարեփոխութիւններ։ Երեսուն ու երեք տարի առաջ Կովկասում հազած ժամանակ տեսած եմ, որ այստեղ կառնոնատրատէս կըմշակեն հողը, կըպարարտացնեն Ասպատառնալով գէպի գիւղատնտեսական ընկերութեան անդամները՝ Նորին Վեհափառութիւնը հարցրեց թէ այն ժամանակուանից յետոյ ինչ առաջադիմութիւն է արել գիւղատնտեսութիւնը Կովկասում։ Ընկերութեան անդամները Նորին Վեհափառութեանը գոհացուցիչ պատասխան տուեցին և առնելով Վեհափառ Հայրապետի օրհնութիւնը՝ դուրս եկան Վեհարանից։

—

Ձանազարների հաղորդակցութեան մինիստրութեան մէջ, մայրաքաղաքի թերթերի տեսլով, մի առանձին յանձնաժողով է կազմուած Սամարղանդից մինչև Տաչքենդ և Կոկանդ երկաթուղի չինելու խնդիրը քննելու համար։

—

ԵԼԵՆԵՆՏՈՐՖԻՑ (Դանձակի պաշ.).— Շաբաթ չէ անցնում որ չրջակայ գիւղերից անասուններ չգողացուին։ Անցեալ օրը Մուսուս գիւղից անյայտացել են մի զոյգ եզներ և Բլաչուր գիւղից երկու զոյգ։ Խեղճ հայերը բանից գործից ընկած պատում են հետքերը գտնելու, բայց ի զուր։ Դոներն ամարանոցից վերադարձող պաշտային բնակիչ Թուրքերն են, որոնք ամեն մի գիւղի մօտից անցնելով թողնում են հայի անասունները և խառնելով իրենց նախրի հետ՝ քշում տանում են գիշեր ժամանակը, իսկ ցերեկները զողացած եզները կապում են խոր անտառի խուլ տեղերում, որտեղ մի երկու պինուած պահապան դնելով, որ ոչ ոք չմօտենայ։ Ձանազարցի երթևեկութեան պահապանները կամ անտառային պահնորդները Թուրքեր լինելով, դժուար է լինելում կորածի հետքը գտնելը։

Կան և մի տեսակ վարպետ աւազակներ, որ համ զողանում են խեղճ հայերի անասուններ, համ էլ իրենք յայտնում են միամիտ հային և նրանցից մի քանի մանէթ պոկում իբրև գտնելու վարձ։ Դրանք կամ վերադարձնում են ապրանքը իւր տիրոջը և կամ տուած փողն էլ հետն է կորչում։

Մի խաչակազի հայի եզները զողացուած լինելով՝ վրայ է հասնում Թուրքի կարաւանին յետ խլելու իւր եզները, բայց կռուի ժամանակ Թուրքերը սպանում են խեղճին և ամբ վրայ կարող են հասատատել սպանութիւնը, քանի որ վկաներ չկան։ Մի տասն օր առաջ մի Թուրք կարաւան գերմանացիների հանդի միջով անցնելիս, մի քանի Թուրք մրանում են բանջարանոցն ու հանում մի երկու պուդ գետնախնձոր. վրայ են հասնում գերմանացիները և խլում են գետնախնձորն ու ծեծում Թուրքերին. բայց Թուրքերը գանգատւում են դատարանին Թուրք վկաներ ցոյց տալով, որպէս թէ գետնախնձորն իրենց սեպհականն է եղած և ոչ թէ գերմանացուներ վճռում է յետ տալ Թուրքին գետնախնձորը և տուգանք վճարել գերպարտութեան և ծեծելու համար։

—Մի ամիս առաջ մի ապօրինի նորածին մանուկ գտան տուալկի ափում։ Այդպիսիներին սէրութիւն է անում համայնական կառավարութիւնը խնամակալութեան արկղից տալով նրանց պահողին ամսական թոշակ։

—

Խաչատուր Աղուլեանի յիշատակը կենդանի պահելու նպատակին նուիրած ունէինք՝ 1,233 ր. 70 կ.։ Այդ գումարի վրայ ստացնելով Իգդիրից պ. Յակոբ Կանայեանցի ուղարկած 20 ր., այժմ ունինք ընդամէնը՝ 1,253 ր. 70 կ.։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՈՒՐԱՑԻ ՄԱՍԻՆ.

Սեպտեմբերի 2-ին Թիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցում կային 4 հոգի. նոր հիւանդացողներ չեն եղել։

Սեպտեմբերի 2-ին երկաթուղային հիւանդանոցում կային 3, աւելացել է 1 հոգի։

Սեպտեմբերի 3-ին Միքայէլեան հիւանդանոցում կային 4 հոգի, որոնք, իրբև առողջացածներ, տեղափոխուած են տերապեւտիական մասը և առ 4-ն սեպտեմբերի

ՆԵՄՐԿ ԿՄԵՐԻԿԱՑԻՑ

Ընտրութիւնների արդիւնքը Գերմանիայում։—Ապստամբութիւններն Հարաւային—Ամերիկայում։ «Ուր որ դնաս, այնտեղի գլխարկը ծածկիր»։ Թողէք մեր լեզուն հանգիստ։ Մի շարժում Միացեալ-Նահանգների կաթոլիկների մէջ։

Գերմանիայում վերջացան ռայխստագի ընտրութիւնները և կառավարութիւնը յաղթանակ տարաւ։ Ով որ Գերմանիայում է եղել ընտրողական պայքարի միջոցին, դիտէ թէ ինչ տենդային տագնապ էր տիրում ամենուրեք։ Ընտրութիւն է էլ, հանաք բան չի։ Թիֆլիսում որ իրար գլուխ են ջարդում պատգամաւոր և խորհրդի անդամ ընտրելու և մանաւանդ ընտրելու համար, որքան ապա Գերմանիայում, այն էլ այժմեան դրութեան մէջ, երբ նրա վարիչների առջև դրուած են միևնոյն միտքին և արտաքին հարցեր։ Սակայն գերմանական ընտրողական պայքարը չենք կարծում այնքան զօրքա-զօրքա տեսարաններ առաջ բերի, որքան բերում են մեր փոքրիկ ընտրութիւնները։

Այստեղ ինչ որ կայ՝ ջանք, աշխատանք, թշնամութիւն և այլն, տեղի է ունենում մինչև ընտրութիւնը. նրանից յետոյ կըթերը խաղաղում են և կեանքը մտնում է սովորական հոսանքի մէջ։ Այսպէս են ամեն կրթուած երկրում ընտրողական չրջանները։ Սակայն չէ որ մենք արևելցի ենք. մեր հոգին

ալ հրաւիրուած էին 80 հոգուց աւելի։ Հրաւիրուածներն էին Վրաստանի ապետականների Թիֆլիսի նահանգի պարապուրդի Մաղալովը, գաւառի ապետականների պարապուրդի՝ իշխան Ե. Գ. Բեհբուդեանը և իշխան Գ. Ի. Ջամբակուրեան—Օրբելեանը, քաղաքային խորհրդի հայ անդամները, արհեստաւորների գլուխը և աւագները, ինչպէս և տեղական մամուլի ներկայացուցիչները։

Վեհ. Կաթողիկոսը, ինչպէս որ հնազանդ սովորութիւն է, աւանձին էր ճաշում մի փոքրիկ սեղան առաջը դրած։

Վեհ. Կաթողիկոսի առաջին կենացը առաջարկեց Կայսեր կենացը, որ բուռն ու անվերջ կեցցէներով ընդունուեցաւ։ Ապետականների պարապուրդի Մաղալովն առաջարկեց Վեհափառի կենացը և ասաց, որ անխոնջ ամեն գաւառկերգի մարդիկ անհամբերութեամբ սպասել են Նորին Վեհափառութեանը։ Նոյնպէս բուռն կեցցէներով ընդունուեցաւ Վեհ. կենացը։

Վեհափառը կրկին բաժակը բարձրացնելով հիւրերի կենացը խմեց։ Սուբլիմա սրբազան ամենի կողմից չնորհակալութիւն յայտնեց։

Երկու անգամ Վեհափառ Կաթողիկոսը հիւրերին դառնալով ճաշ խօսեց և ամեն անգամ մեծ ոգևորութեամբ և կեցցէներով ընդունուեց։

Վերջին անգամ տեղից բարձրանալով Վեհափառը ասաց, որ երեքշաբթի սիրտ մեկնէ նչմարածին և այդտեղ հենց կամենում է ողջունելով բաժանուել իւր հիւրերից և այդ առիթով իրատես ամենքին, որ միաբանութեամբ, սիրով և միութեամբ գործեն, որովհետև այլապէս գործ չինել կարելի չէ։ Այնուհետև ի միջի այլոց ասաց Վեհափառը.

«Ինձ համար կասեն, որ ես չատ միամիտ և պարզ եմ, բայց այնքան միամիտ չեմ, ինչպէս կըկարծեն. ես չատ անգամ կատակով խօսքեր կըլսուեմ, այդ խօսքերի մէջ կայ և փիլիսոփայութիւն։ Իմ առջև փոքրիկ քարեր կըգըլորեն, լրագրեր ալ չատ բաներ կըգըդրեն, եթէ գրելուն գայ, ես ալ կարող եմ գրիչը ձեռքս առնել և աւելի չատ գրել, բայց ինչպէս պիտի կարողանայ Հայրիկ գործ չինել, երբ նրա առաջ

ման դործեր կըդնեն, այդ ման դործերով զբաղուելու ժամանակ չունի Հայրիկ... իմ առաջ կըդնեն համալսարան, հա համալսարան, բայց ես դրանց կըպատասխանեմ Աւետարանով. ես աւետարանի աշակերտ եմ»։

Ժամը 4-ին ղղացուած և ուրախ տրամադրութեամբ հիւրերը ցրուեցան։

ԻՆՆԻՍԻՐԻՑ ԴԱՏԱԿԱՐՏԵԼՔ

—

Էնիսէյսկի եկեղեցական տանէրն կողմէն դատապարտել Հայոց տահմանուած պատիժներն են.

Մահու դատապարտեալք.—Դանիէլ վարդապետ, Անտոն Իչտունի, Յակոբ Ձէպետելքեան, Կարապետ Թումայեան, Յովհաննէս Քայայեան, Կարապետ Ալամճեան, Բարսեղ Տէօքմէճեան, Կարապետ Քէրթմանեան, Յակոբ Բէհլու, Միքայէլ Քէչէճեան, Մարտիրոս Ձիվանեան, Յով. Աղաղրամանեան, Փանոս Աղզումանեան, Կիւլպէնկ Բարսեղեան, Միրիճան Կէպիր-Թորոսեան, Միքայէլ Պետրոսեան և Թորոս Կիւրինցի.—17 անձինք։

15-ամեայ բերդարգելութեան դատապարտեալք.—Յակոբ Տէպետեան, Քարոզիչ պատուելի Մարտիրոս, Մկրտիչ Փափազեան, Աբգիին Դրիգորեան, Դաբրիէլ Վասնուկեան, Կարապետ Կիւրինցի.—6 անձինք։

10-ամեայ բերդ. դատապարտեալք.—Յակոբ Զօլակեան, Ստեփան Պօյաճեան, Սիմեոնէրիմ Քէպապճեան, Մամաս Յովհաննէսեան, Յակոբ Տօլաճեան, Միհրան Վարդանեան, Քայլըպէր Մօմո, Յարութիւն Սիմոնեան — 8 անձինք։

Եօթամեայ բերդ. դատապարտեալք, —տիկին Սուրբիկ, կառապան Յովհաննէս, Յովհաննէս Քարաքիւլաճեան, Դանիէլ Քարաբարսեղեան, Խաչատուր Օղլաքճեան, Գալուստ Ուզունեան, Ղազարոս Աճառեան, Սարգիս Մէհրիւեան, Փաստարան Արսէն, դաստուր Շաւարշ, —10։

Ընդ ամենայն 41 դատապարտեալք։

—Ամրաստանեալներէն Ռուբէն Ձէվահիրճեան՝ խոշոյայդ գրութիւնները կառավարութեան յանձնած և Անտոն Իչտունի ու Կիւլպէնկ Բարսեղեանի ձերբակալումը դիւրացնելուն համար դատապարտութենէ ազատ մնաց, միայն

ԱՄԵՐԻԿԱՆ

ԱՐՈՒԱՆԻ ՊԱՏՄՈՒԱԾՔԸ։

Ամերիկան մի աշխարհ է, որ ամեն ինչ ընդունակ է «ամերիկացնելու»։ Ամեն օտար տարրեր նա ձուլում է և մի քանի տարուայ մէջ չինում ամերիկեան քաղաքացի։ Եւ այս կատարում է ոչ թէ բռնի միջոցներով, այլ ինքնաներքին, կատարեալ ազատութեան մէջ։ Միացեալ-Նահանգների վարչային կազմը և հաստատութիւնների ոգին իրենց ազդեցութեանն են ենթարկում Հին-Աշխարհից եկող։

Այս դէպքում հայերն, ի հարկէ, ետ չեն մնում Գերմանիայից, Իսլանդիայից Ֆրանսիայից, Իրլանդիայից և Սուէդից եկող զաղթականներից։ Հայոց ազգային առածն ուսուցանում է. «որ գնաս, այնտեղի գլխարկը ծածկիր»։ Եւ Հայկի զաւակները կատարում են այս պատուէրը, ոչ միայն գլխարկը փոխելով, (որովհետև իրենց հայրենիքում իսկ նրանք սեպհական գլխարկ չունին) այլ և

կեանքի մտածելու եղանակները։

Նրանք իւրացրել են ամերիկեան մտքի թեթև ոճը, մտքերը դիւրիմաց և հետաքրքիր կերպով արտայայտելու ձևուեսքը, ի հարկէ որոշ չափով։ Ցանկալի է, որ մեր եղբայրներն այս արտաքինի հետ իւրացնեն ամերիկացու տակուն բնաւորութիւնը, ձեռներէց ոգին, մտքուր բարեպաշտութիւնը, բարձր մտքութիւնը, ընկերական ուժով գործ աւաջ տանելու զեղեցիկ ունակութիւնը, փոքրից սկսելու և առանց պոռալու գործելու տակտը։

Կարդանք մի քիչ ամերիկեան «Հայք» լրագրից։ Յօդուածի խորագիրն է «Ձ տուն արդի հայերէնին մէջ»։ Յօդուածագիրն ապացուցանում է, որ Ձ տառը սեպհական չէ մեր հին լեզուին, այլ փոխառեալ է — կամ է ձայնաւորներից։ Այդ տառով սկսուող բառ չկայ. եղած մի քանի հատն էլ ածանցներ են, օրինակ. ընտել, ընկեր, ընթեր, ընտիր և այլն. և թէ նրա նախնական հնչումն է է, որպէս անունն իսկ ցոյց է տալիս— «ձէթ», և ոչ «ըէթ»,

Եւ ապա եզրակացութիւն այս նախադրեալներից.—«Ձ յօդնուացուցականը պէտք է իսպառ արտաքսել Մարդը, գնաց, կանչը, գրիլ և հնչել սկսեցին մեղանչել է հայ լեզուին ոչնչ դէմ. օտար ձայն և ոճ մուծանելէ մեր լեզուի մէջ։ Գրեմք և հնչեմք «մարդն», «գնաց», «մեծն» միանգամ. այսպէս աւելի այժ կ'առնու առողանութիւնն։ Հնչեմք և մեք, որ չաղաքեմ գարաչ գաղնէք իշխաձէ» ձեղ, մեր հարց կորովի և քաջ արտասանութեամբ, և ոչ պատուական

երկամեայ պայմանաժամու ռատիկականական հակողութիան ենթարկեցաւ Մնացեալը անպարտ արձակուեցաւ։

(«Մաղիկ»)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՈՒՐՈՒԻՏ գիւղ (Լոռու վիճակ), 13 օգոստոսի.—Ահա չորրորդ տարին է, որ գիւղիս քահանան վախճանուել է և ժողովրդին հովում է Հայդարբէկ գիւղի (1½ վերստ հեռու մեր գիւղից) Պօղոս քահանայ Տէր Մովսիսեանցը։ Ժողովուրդ գոհ է Տէր Պօղոսից։ Բայց ահաւասիկ մեր գիւղի 100 բազդը, որ եր կու տիրացուներ, որոնք քացի իրենց գոմերում մի քանի ձմեռ իրենց նըման տիրացուից սաղմոս, ժամագիրք թուխախի նման բերան ասվորելուց ուրիշ ոչինչ չգիտեին, գրկին էլ լաւ Աստուած ասյ, չկայ, խնդիր էին առել կոնսիստորին իրենց մեր գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու։ Սրանցից մէկը հանգուցեալ քահանայի որդին է և միւսը հաւարակ գիւղացի։ Կոնսիստորն ի թիւս ուրիշ գործերի, յանձնել էր այս պարոնների խնդիրը իւր անդամներից մէկին, տեղն ու տեղը տեղեկութիւն հաւաքելու համար։ Բարեկրօն քննիչը այս օրերս գալով մեր գիւղը, նախ և առաջ ցանկացաւ ժողովրդի կարծիքն իմանալ, թէ երկու տիրացուներից որին են արժանաւոր համարում։ Գիւղացիները միաբերան պատասխանեցին, որ ոչ մէկի մէջ քահանայական կոչման ոչ մի արժանաւորութիւններ չեն գտնում, որ ժողովուրդն աւելի ուրախ կըլինէր, եթէ հոգևոր կառավարութիւնը հոգս քաշէր և իրենց համար մի կրթուած եւ բիտասարդ ձեռնադրէր։

Սրանց ուրախ ենք, որ մի ետ ընկած տեղ, ինչպէս Լոռին է, գտնւում է մի ամբողջ համայնք, որն երկար տարիների փորձերից խրատուած, աւելորդ համարելով ապէտ քահանայ ունենալը, բողոքում է դրա դէմ և, ինչպէս ինքը ժողովուրդն է ասում, «տատասկան» քահանայ է պահանջում։ Մեր գիւղացիները, որ եկեղեցու հետ սերտ կապերով են կապուած, որ Աստուծոյ կենդանի խօսքը լսելու մեծ եռանդ ունին, որ իրենց սեպհական սուղ միջոցներով երկու-եռ դասղաղութեամբ, և զատ ամէնոյն երկաթաձիգ թուղութեամբ՝ մէկ վանկն, երկուքի, երկու վանքն երեքի, Ն-ուն ը-ի վերածելով։ Եւ «Հայր»-ի մէջ արտաքսուած է խեղճ ը-ըր։ Իզուր չէ այդ ը-ըը վիզը ծռած և ընկճուած. նրան ուզում են դուրս անել մեր այբուբենի կլուբից։ Մի ժամանակ կար, որ Պետերբուրգի հայ ուսանողները վռնդել էին Ն-ուն որպէս յոդ,—անչուշտ դարու առաջադէմ պատկներ լինելով,—և գրում էին քահանայը, վեսայր և այլն։ Այժմ Ն-ուն վրէժխնդիր է ը-ից մի ուրիշ առաջադէմ ախոյանի ձեռքից։

Տեսնում էք ուրեմն, որ ե-ի տեղ Ն-ու գործածելը առաջադիմութեան նըշան է եղել։ Բայց մինչ այսպիսի քիչ Ն-ուներ կան, որ ե-ների տեղ են անցնում մեր թշուառ կեանքի մէջ։

Նոյն քաջամարտիկ ախոյանը, սակայն մոռանում է, որ պապերի առագանութիւնը՝ առաջին՝ մեզ յայտնի չէ. և երկրորդ՝ երբէք առաջադէմ գաւակ լինել չի նշանակում հնչել կամ գրել այնպէս, որպէս մեզնից հազար տարիներ առաջ հնչում և գրում էին։ Լեզուն եռ առնել, մոցնել ուղել իւր հին տոհմանների մէջ, նշանակում է նա գնալ՝ առաջ գնալու փոխարէն։ Լեզուն գնում է առաջ, որովհետև մարդն ինքն առաջ է գնում։

Մի բան որ խորհուրդ տալ կարելի է ե-ի երդուեալ թշնամուն, որի նպատակն անչուշտ բարի է, և ներկայումըս լեզուով գրաղուող հրապարակագիրներ Կ. Պոլսի հայոց մամուլում, այն է՝ որ փոխանակ մատցածին օրէնքները յերիւրելու և մեր նոր լեզուի վրին վաթխթխելու, աւելի լաւ կ'անեն, որ ուսումնասիրեն այն ժողովրդի լեզուն, որի համար ուզում են լեզու կազմել։ Ուսումնասիրեն բուն Հայաստանի վանեցիկների և կռնների բարբառը և այդ ուսումնասիրութիւնից հանած կանոններն մտցնեն մեր նոր գրական լեզուի մէջ։

Այն ճանապարհը, որ Կ. Պոլսի մեր գրագէտ եղբայրները և մեր գրագէտների եղբայրների մեծ մասը կովկասում բռնել են լեզուի նկատմամբ, ոչ թէ նպաստում է մեր գրական լեզուի զարգացմանը, այլ խանգարում։ Ինչո՞ւ էք թափառում օդի մէջ և ձեզանից օրէնքներ ստեղծում լեզուի համար։ Այդ օրէնքներն ստեղծել է ինքը ժողովուրդը։ Ձեզ մնում է միայն առնել և գործադրել։ Ձեր ջայով, ե-նիով և եմ-երով և օտար ոճերի բառացի հայացումով դուք լեզու չէք մշակիլ, այլ կ'աղաւաղէք, որպէս արդէն աղաւաղել էք։ Հաւատարիմ մնացէք հայ ժողովրդին և բառևան է։

Մեր լեզուն նորագողների մի մեծ սխալն առաջ է գալիս չտապողութիւնից։ Նրանք կարծում են, եթէ մի հնչադրութիւն ճշմարտանման գտան, իրաւունք ունին իսկոյն մտցնել այն լեզուի մէջ և յեղափոխել, այսինքն խաւնակել լեզուն։ Ա՛չ. պարոններ։ Դրանից դուրս կըզայ այն Բաբելոնը, որի մէջ գտնւում են մեր արդի գրական լեզուն՝ ե-ի չ-ի ո-ի, Ն-ի և ե-ի, օտար անունների տառադարձութեան երեսից։ Եթէ դուք սիրում էք մեր մայրենի լեզուն, և ոչ թէ ձեր պատիկ վաւրքն էք վնասում, թողէք լեզուն հանգիստ, և ձեր նորոգութիւնները առաջարկէք հաւարակաց դատաստանին։ Այդ դատաստանը —մենք ֆրանսական տիպադեմիա չունինք —կըվճռէ՝ հարկաւոր է ընդունել ձեր առաջարկութիւնները թէ ոչ։ Անչուշտ ամեն գրագէտ հայի պարտականութիւնն է հոգալ մեր նորաբողբոջ լեզուի վայելչութեան և մլուութեան համար։ Բայց այդ անունով չպիտի տանենք մեր լեզուն։

Մի չարժուած է նկատւում Միացեալ-Նահանգների կաթոլիկների մէջ—այն է՝ բաժանուել Հռոմի եպիսկոպոսի աթոռից և մի ինքնուրոյն «ամերիկեան» կաթոլիկ եկեղեցի հիմնել։ Ամերիկացիների հայրենասիրութիւնը չի տանում, որ նրանք «դրսից» կախում ունենան, լինի այդ կախումը քաղաքական թէ եկեղեցական։ Ամերիկան - ամերիկացիների համար։ Նրանք ինչպէս կարող են տանել, որ մի եպիսկոպոս, որպիսի Հռոմինն է, որի նախորդների անցեալը լաւ ծանօթ է նրանց, կարգադրութիւններ պիտի տայ «նոր» ամերիկացիների համար։ «Մենք գիտենք մեզ կառավարել»։

Այս չարժումին անմասն չէ և Միացեալ-Նահանգների կաթոլիկ կղերը — չենք ասում Ամերիկայում — Միացեալ-Նահանգներին աջողել է նրանց ևս ներշնչել ինքնուրոյն հաստատութիւնների ոգին։

Եկեղեցու կազմութիւնը Միացեալ-Նահանգներում ծխական է կամ տեղական։ Ուրեք տէր է իւր եկեղեցուն. նա քնարում է իւր քահանային, նա տնօրինում է իւր ծախսերը և այլն։ Մի քանի ազանդների մէջ նաև ծուխը կազմում է իւր հատատանքը։ Մասնաւոր եկեղեցիները կապած են իրար հետ բարոյական կապերով միայն։ Ցարաբերութեան չըրջանը չի անցնում Ովկիանոսի այդ կողմը։

Բազմաթիւ եպիսկոպոսական կան Միացեալ-Նահանգներում, բայց նրանք ոչ մի կախում չունին Քէնտրբրիի արքեպիսկոպոսից Անգլիայում, որ անգլիական եկեղեցու պետն է։ Նրանք ունին իրենց սեպհական արքեպիսկոպոսն Ամերիկայում։

Այսպէս ուզում են նաև կաթոլիկները ունենալ մի «ամերիկեան պապ»։

Ինչ հետևանք կ'ունենայ այս չարժումն ամերիկացիների մէջ, չգիտենք։ Բայց ամերիկացիները յայտնի են որպէս անկախ և կամքի տէր մարդիկ, որոնք հաւատած են թէ ոչ մի կիսլով կախում չունին ծովի այդ երեսից։ Արդեօք այս պապը կըլինի նոյնպէս անսխալական, այդ ևս չգիտեմ։ Յարկաւ, եթէ «ամերիկեան պապ» հանդէս գայ, Հռոմի եպիսկոպոսը նրան հակաթոռ կըհռչակէ և կընզովէ նրան, ասելով որ նա ս. Պետրոսի և Բրիատոսի յաջորդը չէ, քանի որ ս. Պետրոսը Ամերիկայ չի գնացել։ Բայց այսօր ոչ մի կրթուած կաթոլիկ, յարկաւ չի հաւատում ս. Պետրոսի Ամենակարող Աստուծոյ փոխանորդ լինելը, որպէս նաև գաղանիք չէ այն պատմական ճշմարտութիւնը որ Պետրոս առաքեալը Հըռոմ չի գնացել։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՓԱՂԱՓԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

—Քաղաքական աշխարհում մեծ նըշանակութիւն են տալիս Էլզաս-Լօտարինգիայում կատարուող գերմանական զօրախաղերին և վիլհելմ կայսրի Մեցում արտասանած ճառին։ Անգլիական լրագիրները, խօսելով այդ մասին, ցաւ են յայտնում, որ այդ զօրախաղերը տեղի են ունենում Էլզաս-Լօտարինգիայում և այն էլ ֆրանսիացիների Սեդանում կրած պարտութեան օրերում։

«Daily Chronicle» թերթն է միջի այլոց ասում է. «Վիլհելմ կայսրը կարող էր Մեցն այցելել մի ուրիշ ժամանակ և նրա զօրարանակը ոչինչ չէր կորցնիլ, եթէ նրա վարժութիւնների և զօրախաղերի համար մի այլ տեղ ընտրէր»։

Պահպանողական «Standard» թերթը նկատում է. «Ամբողջ աշխարհը պատրաստ է խոստովանել, որ Ֆրանսիան զօրեղ է, մեծ է և յարգելի, սակայն պէտք է ցաւել, որ այդ պետութիւնն իւր մշտական և ահագին զինուորական պատրաստութեամբ ստիպում է միւս պետութիւններին նոյն անել։ Մասնաւորապէս Գերմանիան ստիպւում է ծանր և անընդհատ զոհաբերութիւններ անել»։ Այն ինչ ուսաց թերթերն այդ բանին, ընդհակառակը, համակրանքով նկատում են, որ ընդհակառակը Գերմանիան է ստիպում ամբողջ Եւրոպային չարունակ զինուորուել և ուզում է վախեցնել ամբողջ աշխարհն իւր «գերմանական ղէնքով»։

—Ֆրանց-Յովսէփ կայսրի Գալիցիայում խօսեցած ճառը մեծ տպաւորութիւն է գործել ամբողջ Աւստրո-Ունգարիայում։ Բոլոր թերթերն ասում են, որ կառավարութիւնը քաղցր աչքով է նայում լեհացիների վրայ։

—Ուաս-գերմանական առևտրական դաշնագիր հաստատելու մասին կայանալիք բանակցութիւնները կըսկսուին հոկտեմբերի 1-ից։ Այդ օրն արդէն վերջնականապէս որոշուած է։ Խորհրդակցութիւնների այդքան ուշ սկսուելու պատճառը գերմանական լրագիրները բացատրում են նրանով, որ գերմանական մի քանի պետական գործիչներ և մասնաւորապէս արտաքին գործերի մինիստր գ. Մարշալը բացակայ են Բերլինից։

—Իուլղարական միտրոպոլիտ Կլեմենտի մասին դեռ մի հատատա տեղեկութիւն չկայ թէ ուր է նա։ Այժմ կասկածում են, որ նրա չանկարծակի անյայտանալը պէտք է վերագրել իւր թշնամիներին, որոնք գուցէ սպանել են տուել նրան։ Սակայն այս լուրը տարածում են Ստամբուլովի հակառակորդները։ Միայն այս պարզ է, որ միտրոպոլիտ Կլեմենտի խորհրդաւոր անյայտանալը պատճառ դեռ չկայանի չէ։

—Բելգիատում կայացած բանուորական կոնգրէսը յօգուտ անգլիական բանուորների որոշումներ է կայացրել։ Այդ որոշումներից զլխաւորը հետևեալն է. պարլամենտի այն անդամը, որ կընաւոի բանուորների կողմից, պարտաւոր է պարլամենտում անպատճառ պաշտպանել սոցիալական սկզբունքները։

—Յունաստանում պարլամենտական նիստերը վերսկսուելու են հոկտեմբերի սկզբներում։

—Սեպտեմբերի 4-ին (ն. ս.) Միացեալ-Նահանգներում մեծ հանդիսով տօնեցին այսպէս անուանուած «բանուորական օրը»։ Նիւ-Եօրկում բանուորական մեծ հանդէս տեղի ունեցաւ, որին մասնակցեցին ամեն կարգի և դասակարգերի բանուորներ։ Անընչնականներին տրգելուած էր հանդէսներին մասնակցելը։ Ամեն բան կանոնաւոր անցաւ. խանգարող ոչ ոք եղաւ։

—Սեպտեմբերի վերջում Պարիզում կայանալու է բանուորների ազգային համաժողով։

—Ֆրանսիայի մինիստր-նախագահ Դիւպուին հրամանագրել է բոլոր նահանգապետներին, որ Ֆրանսիայում բնակուող բոլոր այն օտար-երկրացիներին, որոնք այս կամ այն պատճառով կասկածելի են համարւում և կամ դատի են ենթարկուած, հեռացնեն Ֆրանսիայից։

—Վալենայից հեռագրել են «Times»-ին. «Իուլղարական այս նահանգապետի պրոբութիւնը չատ վատ է։ Խոլերան օր աւուր ընդարձակւում է։ Վերջին տասն և ինն օրուայ մէջ 600 հոգուց աւելի մահացողներ են եղել։ Խոլերան տարածւում է և Վառնայի շրջակայքում։ Գիւղերի բնակիչները վախչում են տարբեր։ Նոյն երկիւղը տիրում է և Սոֆիայում։ Կորուլգեան պրինցը վախենում է դնալ իւր մայրաքաղաքը։ Մի քանի տեղեր անկարգութիւններ են տեղի ունեցել։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսիայում ներկայումս գրաճանաչութեամբ պարապող 2,133 կանայք կան։ Սրանցից 1,211-ը գրում է ուսմանների և գրքոյկների երիտասարդութեան համար, 217-ը մանկավարժական էսսէներ և 280-ն իրեն նուիրել է բանաստեղծութեանը, իսկ մնացածները պարապում են գրականութեան այլ և այլ ճիւղերով։ Այսքան կին — պրոֆեսորից 1,219-ը անդամ են գրականական ընկերութեան, 32-ը—պրոմատիքական ընկերութեան։ Թերթերում գրող կանանց թիւը տասնում է 237-ի, իսկ մեծամասնութիւնն աշխատում է գեղարուեստական հրատարակութիւնների համար կամ գրում է յօդուածներ մոդաների մասին։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆԱՐ-ԴԱՐ»-Ի ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 սեպտեմբեր.—Հրամայուած է արգելել երկաթուղիներով վրան չաքարի կոյտերով տեղափոխելը։

Առաջիկայում տեղի ունենալիք ջրային ճանապարհների հաղորդակցութեան ներկայացուցիչների համաժողովի պարապմունքների համար ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը հաստատել է մի ծրագիր, որի մէջ մտնում են, ի միջի այլոց, հետևեալ հարցերը.—բարուրել գետերի վրայով կատարուող նաւագնացութեան դրութիւնը. ընդհանուր նաւագնացութեան վրայ հսկողութիւն հաստատել, ծովերի և գետերի վրայ կատարուող նաւագնացութեան կայարաններում և նաւահանգիստներում յանձնաժողովներ հիմնել։

Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրի կարգադրութեամբ երկաթուղիների դեպարտամենտը հաստատում է սիստեմատիքական վերահսկողութիւն

Պրամային տադնապը, որի մասին յիշել եմ նախորդ նամակումս, այնպէս սուր կերպարանք չունի այժմ։ Անցեալ չաբաթ մի յատուկ ժողով եղաւ Նիքադոյում խորհելու այս ազգութեան ապագայ մասին և միջոցներ ձեռք առնելու նրա դէմ։ Գլխաւոր պատճառը հաւատի և հաւատարմութեան պակասութիւնն էր համարւում։ Ազգանները երկար տեսել չեն կարող այս աշխարհում, ուր ամենքը կեանքի մարդիկ են և գալափարն իզոկն գործ են գործնում։ Ամբողջ մամուլը՝ քաղաքական, կրօնական, բնագնական, մանկական-բոլոր թերթերը զրաղուեցին այդ հարցով. քարոզիչները խօսեցին եկեղեցիներում, միտինգներ կազմուեցան, և այսօր թերթերն ուրախութեամբ յայտնում են, որ «հատատարմութիւն»-ը որպէս զօրեղ ֆակտոր աւելորդ գործում, հրաշքներ կարող է գործել։ Հաւատում ենք, որովհետև Միացեալ-Նահանգներն ազատասիրական համապետական անանկութիւնից։ Կ'ուզէինք, որ մեր վաճառականներն ևս հաւատային և ազնութիւն և հաւատարմութիւն աւելի յոյժ տային աւելորդ գործերում։ Այդ առաքինութիւնը չէ Ամերիկայից չպիտի սովորենք։ Մեր պապերն են ուսուցել մեզ։

Յ. Խաչատեանց.

Օպատաս
Birchbay Camp.
Քանատա Ամերիկայում։

ճանապարհները կանոնաւորապէս չհսկելու վերաբերմամբ. կազմակերպուում է ծառայողների մի առանձին մարմին և ամենահեղ ուղարկում են առանձին կանոններ՝ կատարուող չարժական աշխատանքների և տեղափոխուող բեռների քանակութեան մասին տեղեկութիւններ ներկայացնելու վերաբերմամբ։

ՄՈՍԿՈՒԱ.—Այսօր առաւօտեան այսահղ ժամանեց Մոսկուայի մետրոպոլիտ Սերգէյը։

ԲԵՐԼԻՆ.—Ռուս-գերմանական առևտրական դաշնագիրը կապելու համար՝ կայսեռական համաժողովի մասին պատրաստութիւններ տեսնելու հասար՝ կազմակերպուած է մի մասնաժողով զանազան վարչութիւնների ծառայողներից։ Այդ յանձնաժողովը, որ պարապում է խորհրդակցել էքսպերտների հետ, այսօր սկսեց իր պարապմունքները։

ԼՈՆԴՈՆ.—Բուէնոս-Այրէսից ստացուած տեղեկութիւններից երևում է, որ ապստամբուած նաւատորմիղը չորեքշաբթի օրը ռմբակոծել է Ռիո-Գը-Ժանէյրոն. ռմբակոծութիւնը տևել է ամբողջ օրը. վնասուած են մի քանի հասարակական շինութիւններ. քիչ մարդիկ են սպանուած. զօրքը և բերդապահ զօրամասերը կառավարութեանը հաւատարիմ մնացին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—«Прав. Вѣст.» հաղորդում է, որ՝ խոլերայի տարածման առաջն առնելու համար, Սև ծովի վրայով երթևեկող բոլոր մարդատար նաւերը ապահովեցրած են բժիշկներով։

Արտաքին գործերի մինիստրութեան Մոսկուայի արխիւի տեսուչ բարոն Բիւլերին, որի ծառայութեան յիսնամեակը այսօր լրանում է, շնորհուած է Ալէքսանդր Նեւսկու շքանշան, որ չորակներով զարդարուած է։

ՊԱՐԻԶ.—Երէկ Դրիւնորլում տեղի ունեցաւ գնդապետ Միրիէլի թաղումը, որին ներկայ էին հասարակապետութեան նախագահի ներկայացուցիչը և ռուսաց զինուորական ատաշնը։ Քաղաքական բնաւորութիւն ունեցող դամբանականները խօսուեցան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.— Այսօր առևտրական և արդիւնաբերական դեպարտամենտում պետական բանկի և մի քանի կրակից ապահովեցնող ընկերութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ խորհուրդ կայացաւ՝ որոշելու կառավարութեան հողատէրերից ձեռք բերած հացահատիկների ապահովագնի և բանկից տրուելիք փոխառնութեան չափը։ Ներկայացուցիչները յայտնեցին իրենց պատրաստակամութիւնը՝ ապահովեցնել այն հացահատիկները, որ գնած կըլինին պետական հիմնարկութիւնները և գեմստուոները, տարեկան ապահովագնից երկու անգամ աւելի պակաս գնով, որքան էլ որ հացահատիկները գոնուելիս լինին հրդեհուելու համար վտանգաւոր չինութիւններում։

Սեպտեմբերի 12-ին Պետերբուրգից ուղևորուում են Բերլին առևտրական բանակցութիւնների համար ընտրուած պատգամաւորները՝ պ. պ. Տիմիրիազև, Լամբրին և Ռաֆալովիչ։ Մինչև սեպտեմբերի 11-ը առևտրական բանակցութիւնների համար կատարուած նախապատրաստական աշխատութիւնները միներտութեան մէջ վերջացած կըլինին։

ՊԱՐԻԶ. — Քաղաքային խորհուրդը ցանկութիւն յայտնեց, որ Այիաչիօն լինի որոշուած իբրև իջևանատեղի-նաւահանգիստ Միջերկրական ծովի ռուսաց նաւատորմիղի համար և որոշեց այնտեղ ռուսաց եկեղեցի կառուցանելու համար տեղ տալ։

Ի պատիւ ռուսաց ծովագնացների կազմուելիք հանդէսների՝ առաջին ստորագրութեան թերթով 4 լրագրերի հատաքած փողի քանակութիւնը հասնում է մինչև 15,000 ֆրանկի. ստացուում են փողեր և չատ գաւառական թերթերից։ Թանկագին հիւրերի համար 2,500 հոգու մասնակցութեամբ բանկետ կըկազմուի անցեալ համաչխարհանդիսի մեքենաների գալերէում։ Զինուորական և ծովային վարչութիւնների մասնաչանձնաժողովը վճռեց միանալ Պարիզի մասնաչանձնաժողովի հետ, որպէս պիտանդէսներին տրուի, որքան հնար է, մեծ փայլ ու չքեղութիւն։

ԼՈՆԴՈՆ.—Պատգամաւորների ժողովը պաշտօնապէս հրամանագրել է, որ Լոնդոնի նաւահանգստի առողջապահական խորհուրդն արգելի Բրիտանիով և Լիբաւայով եկող ռուսական հրէաների Լոնդոնում իջնելը, մինչև նրանք գոհացուցիչ տեղեկութիւններ չներկայացնեն, թէ Լոնդոնում ինչ տեղ պիտի մնան։

Հրէաների կեղտոտ անկողինները և չոբերի ցամաք հանելը բոլորովին արգելուում է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 սեպտեմբ. — Արտասահմանեան լրագրներում յայտնուող յօդուածների պատճառով, որոնց մէջ մատնացոյց են անում այն հանգամանքի վրայ, որ՝ չնորհիւ Գերմանիայի հետ ունեցած մաքսային կռուի և առևտրական քաղաքականութեան, ռուսաց գանձարանում եղած ոսկու պաշարը տատանում է, «Прав. Вѣст.»-ում առաջ են բերուած ապացոյցներ, որոնցից ակընյայտանի երևում է, որ առ 1-ն սեպտեմբերի ներկայ տարուայ կառավարութեան տրամադրութեան տակ գտնուում է 600½ միլիոն րուբլու ոսկի, որ պատահարար քիչ է անցեալ տարուայ սեպտեմբերի 1-ին եղած նոյնպիսի գումարից 3,223,000 րուբլով։ 1892 թուի հաշուից երևաց, որ պետութեան մուտքը ելքից չատ է եղել 49,4միլ. ր. առ 1-ն յունուարի 1893 թուի պետական գանձարանում առ ձեռն դրամագլուխը մինչև 84,8 միլիոն րուբլու էր հասնում. 1893 թ. աւելի ծախսը հնարաւորուում էր ծածկել 68,5 միլիոն րուբլու վարձ բանալով, բայց 1893 թուի ներքին փոխառնութիւնից ստացուած օգուտը հասաւ 96,8 միլիոն րուբլու։ Գանձարանի առ ձեռն դրամագլուխը պիտի աճեցնել անցեալ և 1891 թուի 3% ոսկու փոխառնութիւնից գոյացած փողը, որ լինում է մօտ 60 միլ. ր՝։ Թղթադրամով Այսպիսով պետական գանձարանի այժմեան առ ձեռն դրամագլուխը հասնում է մինչև 173,1 միլիոն րուբլու։ Ներկայ թուի առաջին 7 ամիսների ընթացքում մուտքն անցել 1892 թուի համեմատութեամբ լինում է մինչև 32 միլիոն րուբլի, սակայն քանի որ 1893 թուի հունձն աւելի ուշ է անցել տարուայ հնձից, հետևապէս վերոյիշեալ առ ձեռն դրամագլուխը զգալի կերպով դեռ կ'աճեցնայ։ Այս բոլորից պարզ երևում է, որ ֆինանսական միներտութիւնը հարկաւորութիւն չունի և չի էլ կարող ունենալ փոխառնութիւն անելու, ուստի պիտի մերժի փոխառնութեան մասին իրեն անելիք բոլոր առաջարկութիւնները։

—

ԲՈՐՍԱ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 սեպտեմբերի

—

Մարհ. կուրսը, 3 ամսով, Լոնդոնում 10 ֆ. ստեր. համար 95,₃₅ սակ.
Բերլինի 100 մարկ. 46,₁₀ —
Պարիզ 100 ֆրանկի. 37⅜ —
Մարհ. կուրսի տրամաբ. բաւակ. ամուր է.
Նոր կտրած պղտմպ. 7,₆₇ առք, 7,₆₀ ծախ.
Մաքսային կտրոնը (100 մետաղ րուբլուն)...
. . 153 առք. 153⅜ ծախ.
Արծաթը . . . —
Բորսային վեզլը . 5 մինչև 6½%
Պետ. բան. Ա. հրատ. 5% տոմս. 101½ առք.
2-րդ . . . 102 սակ.
1883 թուի 6% ոսկեայ բոնտը. 158 առք.
1884 թուի 5% — — 162 —
Արևելեան փախ. 100 և 1000 րուբլիանոց 5% Բ. հրատ. 101½ սակ.
,, ,, ,, Գ. հրատ. 102 առք.
1864 թ. Ա. ներքին փոխառու. վիճակահան. 5% տոմսեր . 239½ —
1866 թ. Բ. ,, ,, 217 սակ.
Արքունի երկաթուղային բենտը 103 ծախ.
Ներքին փոխառ. 4% I սերիան 93½ սակ.
,, ,, II սերիան 93¼ —
,, ,, III սերիան 93⅜ —
,, ,, IV սերիան 93½ առք.
4½% երկաթուղ. փոխ I հրատ. 98¾ սակ.
,, II հրատ. 1893 թ. 98½—98½ առք.
Ագն. կալ. բան. 5% գրաւաթ. 99¾ առք.
,, ,, 4½% — 99⅛ ծախ.
Արք. ազն. կալ. բան. 5% վիճակահանութեան տոմսերը . 192 սակ.
4½% շինական հող. բանկի վկայ. 98¾ —
Հարաւ-Արևմտեան երկաթուղ.
4% օբլիգացիան . . 94 ծախ.
Մոսկուա-Փիազանի . . 93 —
Ռիազան-Ուրալի . . . 99 սակ.
Կուրսկ—Կիևի . . . 99 —
Կալ. փոխադ. վարկի ընկեր.
4½% ընկեր. գրաւաթղթերը 155 —
5% . . . . . 100⅜ ծախ.
Պետերբուրգի քաղ. վարկի ընկ.
5% օբլիգացիան . . . 101¼ սակ.
Մոսկուայի . . . . 100⅝ —
Օդեսսայի 5½% . . . 100⅜ —
Թիֆլիսի . . . . 98½ ծախ.
Ընհաստանի կալ. բանկի 5% գրաւաթղթերը . . 101 ծախ.
Խերսոնի նահանգի կալ. բանկի 5% և 5½ դրաս. թղ. 100¾ առք. և 100 առք.
Խարկովի կալ. բանկի 5% . 99⅞ —
Գալտաւայի . . . 99⅜ —
Տուլայի . . . 99½ առք.
Կիևի . . . . 101 ծախ.
Մոսկուայի . . . 101 —
Բեսարաբիա—Տաւրիկեան . — —
Նիժն.—Սամար. . . 99½ առք.
Դոնի . . . 100 ծախ.
Վիլնայի . . . 99½ առք.
Թիֆլիսի 5% և 6% . 100½ և 100 ծախ
Բուխարեստի . . 100¼ և 100 —
Ակցիաների գները . . 451 սակ.
Միջազգային առևտրական . 155 առք.
,,Աբտ. առևտր. ռուս բանկի 285½ սակ.
Վոլգա-Կամայի առևտրակ. . 867 առք.
Սիբիրի բանկի. . . 640 —
Բեսսարաբ.—Տաւրիկ. . 580 սակ.
Խարկովի կալուածական . 510 ծախ.
Գետերբ.-Տալալի . . 427 —
Գալտաւալի . . . 615 —
Նիժեգորոդ.-Սամարայի . 640 —
Վիլնալի . . . 610 —
Դոնի . . . . 715 առք.
Կիևի . . . . 812 ծախ.
Մոսկուալի . . . 615 —
1827 թ. կրակից ապահովուող առևտր ընկերութիւն . . 1180 —
Հիսիս. ապահովուող ընկ. . — —
,,Ռոսսիա'' ,, ,, . 299 առք.
Ռուսաց Նաւագնացութեան և առևտրի ընկերութիւն . 700 ծախ
,,Կաւկաս և Մերկուրի'' ընկ . 402 —
Ռուս. երկաթ. գլխ. ընկեր. . 243 —
Մոսկուա-Ռիազանի երկաթ. . 470 —
Կուրսկ-Կիևի . . . 379¼ սակ.
Բրեանսկ-Բոլոդովի . . 80 սակ.
Դրիսադ-Յարլց. . . 151 —
Հարաւ-Արևմտեան . . 115 առք.
Բորսայի արտադրութիւնը մեղմ է։

Խմբագիր—հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԼԻ - ՂԱՐԱԳԻԼԻՍԱՑԻ երկդասեան դպրոցի համար հարկաւոր է մի ԵՐԻՈՐԻ ԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՑԻՉ, որը աւանդելու է Կրօն և Հայոց լեզու-(չաբաթական 28 դաս) տարեկան 300 րուբլի ռոճիկով։ Բացի դրանից կ'ստանայ բնակարան և ծառայ։

Դիմել՝ Александрополь Егише Топчяницу.

(482) 3—1

ԼՈՑՍ ՏԵՍԱԼ ՆՒ ԵՒՈՒՈՒՄ Է

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Նոր (առաջին) թարգմանութիւն

ՄԿՐՏԻՉ Ց. ԷՄԻՆԻ

(Ծանօթութիւններով և յաւելուածներով)

Գինը 2 ր. է, ճանապարհի ծախսով 2 ր. 25 կոպ.

կարելի է առանալ

Մոսկուա, Ներսիսեան լազարեան ճեմարանի կանցելեարիայից։

(464) 5—5

ԿՈՒՉՄԻՉԻ ԳԵՂԱՀՈՏԻ

Դեղատոր պահեստում

Մատուցում է Կուչմիչի գաւած «Ephedra vulgaris» (թոնաւոր փուչ) խոտ, որի մասին «Ամարասկի Ղուբերնսկի Վեդոմ.» 1889 թ. № № 71 72-ում, Նեդելիա» չաբաթաթերթի 1891 թ. № 23-ում, «Գրաժդ.»-ի 1891 թ. № 268-ում օգտակար է ճանաչուած և առաջարկուած է իբրև բժշկութ լաւ միջոց ամեն տեսակ սակրացուի, աւամոքի և ալիքների բորբոքումի, հազի, փորա կապութեան (զարդի), արեան պակասութեան, չէչեոեչնյէ դէմ, և վերականգնում է կանոնաւոր մարսողութիւնը։ Իւրաքանչիւր փաթեի գինն է 1 ր., դեղն ուղարկուում է ընդարձակ բացատրութիւններով հանդերձ, կատարեալ թոյլատրութեամբ կազմուած։ Պահեստում կան բրոշիւրներ Էֆեդրի մասին։ Ցիչեալ դեղից 3 ֆ. դեղի համար բրոշիւրները ձրի կ'ուղարկուեն։

Հասցէն՝ Г. Бузулукъ (Самарской губерн.) въ складѣ хойника Сергѣю Зиковьевичу Орлову.

(258 2—1

ՊԱՆՍԻՕՆ ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

ԳԻՄՆԱԶԻՕՆԻ ԵՒ ՌԷԱԼԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԲԱՆԻ ՁՈՐՈՒ ԴԱՍԱԽՐԱՆՆԵՐՈՎ։

Տեղափոխուեց Դանովսկայա փողոց №. 11. սեփական տուն.

Ընդունում է աշակերտներ պատրաստելու գիմնազիօնի, ռէալական ուսումնարանի, կադէտ տների կորպուսի մինչև չորրորդ դասատունը, երկրաչափական և տեխնիքական ուսումնարանների համար։ (Ուսումնարանին կից կայ մանկական պարտեզ)։

Ուսումնարանում կըդաստիսուեն գիմնազիօնի ուսուցիչներ։

(477) 10—4

BATEAUX A VAPEUR FRANCAIS A. PAQUET ET CIE

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„Ն. ՊԱՔԷ ԵՒ ԸՆԿ.“

Կանոնաւոր և ուղիղ երթևեկութիւն ՄԱՐՍԼԻԽԻՑ ԲԱԹՈՒՄ չորեքշաբթի օրերը երկու չաբաթը մի անգամ, յունուարից սկսած և ԲԱԹՈՒՄԻՑ ՄԱՐՍԼԵԼ,

Բաթումից Մարսէլ գնալիս մանում է Տրապիզոն, Սամսոն և Կ. Պոլիս քաղաքները։

Բաթումից Պարիզ ուղիղ հաղորդակցութեան տոմսակները սովորական գիջումն ունին։

Բաթումից մեկնում է՝

Չորեքշաբթի, 12/24 սեպտեմբերի չոգենաւ «Անատոլի», կապիտան Պարբիզ և այդպէս երկու չաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին կէսօրուայ։

Տեղեկութիւններ ստանալ ցանկացողները թող բարեհաճեն դիմել հետևեալ գործակատարներին։

Բաթումում—պ. ՎԻԿՏՈՐ ԴԱՒՐՆՈՑԻՆ, Նաբերեժնայա։

Թիֆլիսում—պ. ԲԱԲԵԿԵՆԴԱՆԵԱՆԻՆ, Սիօնի փողոց, քարուանսարայ Գէորգ աղայի։

Բաթումում—պ. Սամուէլ Դիլդարեանին, Կոլիբակինսկայա հրապարակ։

Նովորոսիյսկում—պ. ԼՈՒԻ ՈՒՆՈՑԻՆ։

Ձիկադցի ցուցահանդէսը դնալ ցանկացողները կարող են ստանալ մանրամասն տեղեկութիւններ թէ ճանապարհի ծախքի և թէ Հաւրից չոգենաւի մեկնելու ժամանակի մասին

(257) 20—6

ԴՈՒՔԻ
«ԿԱՊՐԻՋ ՕԴԻԿՈԼՈՆ ՆԵՒԱՅԻ» ՍԵՊՕՆ
ՎԵՐՋԻՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ
«Կապրիչ Նեաչ»
«Կապրիչ Նեաչ»
»Կապրիչ Նեաչ

Միւսկ Դուխի | Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ | Միւսկ Սապօն

ՏՖԻԹՆԻԿ-ՔԻՄԻԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ

„ԿԱՊՐԻՋ ՆԵՒԱՑԻ“ զամբոնները գերազանցում են ընտիր յատկութիւններով և պատրաստուած են Զիկադցի համաշխարհանդէսի համար

ՊԱՀԵՍՏՆԵՐ Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Ալէքսանդրինեան Թատրոնի հրապարակ. 9.
,, ՄՈՍԿՈՒԱՆ, Նիկոլաեսկայա, տ. Եերմոլեեսի։
,, ՊԱՐՇԱՒԻ, Նօվի Սվետ, 37. և Կայսրութեան ամենալաւ մագազիններում

(M). 50—25

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Երկու սեռի անձանց Համար

ՏԵՍՆԵՐԿՈՒԹԻՒՐՈՒՄ ՏԵՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական հանապարհով Հմուտ Հաշուապահներ։ Առարաժներն ստանում են առաջադիմութիւն։

Առանձին առարկաները սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն Համրիչի վրայ, 5) Առևտրական թղթի ակցութիւն, 6) առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) գեղագրութիւն։

Ուսումն սկսուելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում Սօլօլակում՝ Ալէքսանդր Փրիդոնովի տանը № 9, Սերգիէվսկայա և Նագորնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրն ու կանոնները կարելի է ստանալ ԶՐԻԱՊԻՆ եղբ. Ծովինարների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисѣ. С. П. Мануэльянцу.

(443) (25—20)

Дозв. Цензурою Тифлисъ, 6-го Сентября 1893 г. Տպարան և վիմագ. Ա. Մելիք-Շահնազարեանցի։ Типо-Лит. А. Меликъ-Шахназаріанца. Воронц. Набережн., д. Григорьянъ Арм. Приход. Школы